ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...



ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ
(1866–1920)

Վրթանես Փափազյանը ծնվել է Վանում: Նա մեր գրականության պատմության մեջ հայտնի է որպես մտավորական, գրող, մշակութային գործիչ, գրաքննադատ, խմբագիր, պատմաբան, ուսուցիչ և թարգմանիչ:

1868 թ. ծնողների հետ տեղափոխվել է Ագուլիս, որտեղ և ստացել է նախնական կրթությունը: Սովորել է Թավրիզի Արամյան դպրոցում, ապա՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ավարտել է Ժնևի համալսարանի գրականության և հասարակական գիտությունների բաժինը: Երկար տարիներ ուսուցիչ է եղել Վանում, Թիֆլիսում, Թեհրանում, Շուշիում:

Փափազյանը բազմաժանր գրող է: Գրել է զրույցներ, պատմվածքներ, վիպակներ, վեպեր, կատարել է թարգմանություններ:

Մահացել է Երևանում: